ԱՋԳԱՅԻՆ

Նորին Վեհափառութիւնը՝ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. Արբազնագոյն Կաթուղիկոսը՝ ամսոյս 3-ին մեկնել է Երուսաղէմից, Եաֆֆա—Ալեքսանդրիա—Տրիեստ—Վիեննայի վրայով դէպի Ռուսաստան։ Ամսոյս 29-ին առաւօտեան ժամանել է Թիֆլիս։ Թէ Հայ և թէ օտար թերթերը լի են շքեղ և հանդիսաւոր ընդունելութեանց և դիմաւորութեանց նկարագրութեամբ։ Նորին Արբութիւնը մօտ օրերս սպասւում է Էջմիածնում։ Ամեն տեղ Նորին Վեհափառութեանը ընդունելու համար մեծ պատրաստութիւններ են տեսնուած։ Մեր Պատգամաւոր—թղթակցի համակիները՝ երևի պրոտոի անհոգութեամբ կամ անճշտութեամբ՝ մինչև օրս տեղ հասած չլինելով, Նորին Արբութեան ճանապարհորդութեան նկարագրութիւնը թողնում ենք հետևեալ համարներին։

*
* *

Ամենապ. Տէր Տեղակալը այս երկտողով շնորհակալութիւն է յայտնում այն բոլոր հաստատութեանց և անձանց, որոնք շտապել էին շնորհաւորել Նորին Բարձր Արբազնութեան ոտնը։

*
* *

Յանուն Ամենապատիւ Տէր Տեղակալի տեսցուել է հետևեալը։

Կարդալով «Արարատի» վերջին համարում հրաւէրը գալ յօգնութիւն կարօտելոց, որք արմտեաց պակասութեան պատճառաւ նիւթականապէս նեղ դրութեան մէջ են, պարտաւոր համարեցինք մերովսանն կատարել մեր մարդասիրական պարտքը, ի լրումն որոց ընդ սմին ուղարկում ենք յիսուն ռուբլի, որը խնդրում ենք գործադրել վերոյիշեալ նպատակի համար։

Խորին յարգանօք առ Արբազնութիւնդ ի դիմաց Արափելեանի և Կաճկաճեանի՝

ԴԱՆԻԷԼ ՏԷՐ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ.

11 յունվարի 1893 թուին։

*
* *

խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ հետևեալ նամակները։

ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

Ուղարկելով նամակիս հետ քսան հինգ (25) բուբլի յօգուտ Երևանու սովեալների, որ ժողովել եմ 15 Յուլիսի Մոսկէս Իզմիրեանի ասնին, մի քանի երիտասարդների շրջանում հացկերոյթի ժամանակ, յայտնի ազգասէր Իզմիրեանի ագարակում, խնդրում եմ այդ գումարը հասցնէք նոյն գործի վերաբերութեամբ կազմուած յանձնաժողովին, և հրատարակէք Արարատի մօտակայ համարներում ի միամտութիւն նուիրատուների։ Յուլիսի 29-1893 ամի Ղզլար։ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՊԻ—ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ։

***

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ.

Պատիւ ունիմ ներկայիս ուղարկել Ձեզ Երևանայ նահանգի սովելոց համար հանգանակուած երկու հարիւր տասն երկու բուբլի (212) և նուիրատուաց ցուցակն, խնդրեմ բարեհաճեցէք յիշեալ գումարն հասցնել սովելոց և ցուցակն տպագրել Ձեր պատուական ամսագրոյ համարներու մէկու մէջ ի լուր նուիրատուաց։

Մնամ խորին յարգանօք՝ Դ. ԻԻԶԻՐԱՇԵԱՆՑ։

Բաքու— 10-ն Օգոստոսի 1893 Ը.

—

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ

Վասն հայ սովելոց Երևանայ նահանգի 10-ն Օգոստ. 1893.

	Ր.	Կ.
Դաւիթ բէկ Իւզբաշեանց	15	»
Բժիշկ Ալիխանեան	10	»
Կ. Ն. Յակոբեան	10	»
Պարչևսկի	3	»
Բ. Շախեանց	5	»
Թամամշեանց	3	»
Լալայեանց	15	»
Միխայէլ Ունանեանց	5	»
Սէրգէյ Աւշարեանց	5	»
Գրիգոր Մանթաշեանց	5	»
Միխայէլ Բէկլարեանց	5	»
Բագրատ Շխեանց	5	»

	Ր.	Կ.
Արշակ Ունանեանց	5	»
Աստուածատուր Կոմանեանց	3	»
Խաչատուր	5	»
Լևոն Դուլեան	5	»
Ալէքսանդր Ասրիբէկեանց	5	»
Տէր Գասպարեանց	5	»
Յովհաննէս Սիմէրեանց	4	»
Ի. Բէկլարեանց	5	»
Յովսէփ Թամամշեանց	10	»
Գերասիմ Թումայեանց	10	»
Կոստանդին Պօղոսեանց	3	»
Այվազեանց	3	»
Եղիշէ Նարաթեանց	20	»
Վահրամ Մութաֆեանց	10	»
Ա. Նասիբեանց	3	»
Եղբարք Թումանեանց	10	»
Միխայէլ Արամեանց	20	»
Գումար	212	»

Սոլեալների օգտին մինչև այժմս ստացուած նպաստների գումարն է (թէ Տ. Տեղակալի և թէ խմբ. հասցէին ուղարկուած).

Բժշկապետ Յ. Գասպարեանից	200	ռուբլի
Ս. Բէգնազարեան քահանայից	20	»
Գ. Մ. Առաքելեանց Աստ. տուն և ընկ.	100	»
Ն. Առաքելեան և կամկամեան	50	»
Ղզլարցի մի խումբ երիտասարդներից	25	»
Բագուից Դ. Խղբաշեանի ձեռքով	212	»
Հանդերձ գումար	607	»